

ՆՇԽԱՐՆԵՐ ՀԱՅ ԼԵՁՈՒԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՅ.

Այս ընդհանուր վերնագրի տակ լոյս կ'ընծայենք լուսարանութիւնը մի շարք լեզուական երևոյթներ, որոնց հանդիպում ենք հայերէն ձեռագրերի հետազոտութեան միջոցին: Մեզնից անկախ պատճառներով չպիտի կարողանանք նախ քան ուսումնասիրութիւնը պրպտել ըստ ձեռագրերը, որոնց թիւը, Մայր Աթոռի մատենադարանում, 4000-ից աւելի է: Դիտակցում ենք սակայն, որ ներկայ ձեռք էլ, երբ, իւրաքանչիւր ձեռագրի պրպտումից յետոյ, պատրաստում ենք մի մի յօդուած, հարուստ, ցարդ մեզ անծանօթ մնացած, երևոյթների նկարագրութեամբ, մերովսանն մատուցանում ենք մի համեատ բայց կարևոր ծառայութիւն մայրենի լեզուի ուսումնասիրութեան մեծ գործին:

Ներկայ մեթոդի թերի կողմն այն է, որ մարդ ակամայ ընկնում է կրկնութեան մէջ, երբ արդէն նկարագրուած մի որ և է երևոյթ, ուրիշ ձեռագրի մէջ, կրկին պատահում է: Այս անպատեհութիւնը մեղմացնելու համար յետադաշում խոյս կը տանք միևնոյն երևոյթի մասին նախկին ընդարձակութեամբ խօսելուց:

Մեր դիտողութեանց հիմքը կազմում են ձեռագրերի լուսանցներում ու ստորոտներում կամ, ուրիշ խօսքով, բնագրից դուրս գտնուած ծանօթութիւնները, լուսարանութիւններն ու շատ անգամ էլ յիշատակարաններից քաղուած մանր հատուածներ, որոնք սակայն ժամանակի աշխարհարարն են ներկայացնում երբեմն բոլորովին անխառն, երբեմն էլ խճողուած զրական լեզուով և աւանդական հնարան դարձուածներով, որոնց մասին, իրենց տեղում, չպիտի զլանանք մեր նկատողութիւնները:

Հարկը պահանջած զէպքում աւելորդ չպիտի համարինք տալ նաև համապատասխան հատուածների բնագրերը:

I.

Ձեռ. 359—2627, Ասուածաշունչ. Թուակ. 22է=1338 (էջ 87բ). գրութեան տեղ՝ Սիւ:

Սոյն ձեռագրում գտնում ենք երկու տարբեր լեզուներ տարբեր շրջանների: Մին ներկայացնում է կիլիկեան գաւառների հայերէնը 1338-ին (22է), միւսը՝ Դարանաղեաց կամ Երզնկայի բարբառը 1425-ին (ՊՀԴ):

Ա. ի բնագրերն են.

Յր Համար ֆուանկնոյն զոր ջարխատը կոչեն, որ ի վերա ամէն ա՞ծաշնչին ճապղած է:

Եւ բազում աշխատութ՞ք փոխեցի առ ի դիւրաւ գտա-
նելոյ եթէ բան ինչ իցէ յերկոցունցն միջի: Արդ գլուխ ծնն-
դոցն համարս ունի ՞՞՞. ուր լքով (=կարմրադեղով) ֆէ և ուն կա՞
ֆուանկուն է: Արդ աղաչեմ զբազմամեղս յիշել առաջի քի՞. որով
և դուք յիշեալ լիջիք ամէն: Ընդ նմին և զայժմ գրող գրոցս Աղա-
չեցէք վասն իմ:

Աւգնէ ք՞ս գրողիս զի կատարեցից:

էջ՝ 87ր—յաւրս դ՛շ, յամիս յունիս իգ. չձէ եդին ՞ք մարդ
ի մեքենայս, և չարաչար սատակեցան. վասնզի զաշխարհս և զբերդն
Սիսոյ ծախեալ էին անաւրինաց գաղտարար. և աւրս էր կէտ եղեալ
ֆլասու նոցա. վա՛յ զիրենք»:

էջ՝ 115ա—մեղա տ՞ն ա՞յ և վն աննիւթ գրելոյս:

էջ՝ 115բ—Ֆուանկուն համարն ի յայս գլուխս լ՞ա:

(Իմաստն է—լատինական բնագրում այս գլուխը բաղկա-
նում է 31 համարից կամ տնից):

էջ՝ 195ա—Ֆ՞ռ աստի սկսանի զգիրքս:

էջ՝ 343բ—Ֆ՞ռ համարն ի յայս մարգարէս ժ՞դ:

էջ՝ 346բ—Ֆ՞ռ համարն ի մարգարէս յայս

էջ՝ 472բ—Գործք առաք: այտ համարտ ուր ֆէ ու ռայ գըտ-
նուս ի գիրքտ նայ ֆուանկնոյն ջարխատըն է եւ այս գրոցս ջումլն
ի՞ք է:

Այս հատուածներն, ինչպէս յիշեցինք, անխառն կերպով չեն
ներկայացնում իրանց ժամանակի աշխարհաբարը: Նրանց մէջ կան
գրաբարի յատուկ ձևեր, որոնք աւանդաբար գործ են ածուում
գլխաւորապէս արձանագրութեանց մէջ, գերեզմանաքարերի վրայ
և յիշատակարաններում:

Այդպիսի աւանդական արտայայտութիւններ են—«բազում
աշխատութեամբ», «աղաչեմ», «զբազմամեղս յիշել առաջի Բրիս-
տոսի», «որով և դուք յիշեալ լիջիք», «ընդ նմին», «մեղայ տեսուն
Աստուծոյ», «աստի սկսանի», «գլուխ ծննդոց»:

Այնպիսի քերականական անհետևողականութիւն, որպիսին է
մէկ կողմից «գտանելոյ» «Սիսոյ», միւս կողմից ֆուանկու և ֆուանկ-
նոյն ցոյց է տալիս, որ հեղինակը գրաբարի քերականութեան բա-
ւական ծանօթ անձն է, բայց ոչ այն աստիճան, որ չազդուէր կեն-
դանի խօսակցական լեզուից: Այսպիսով քննութեան կարող են
բնաւ չառնուել հետեւեալ ձևերն՝ իբրեւ ակներև փոխառութիւն գրա-
բարից, «առ ի դիւրաւ գտանելոյ», «բան ինչ իցէ», «երկոցունց»,
«գրոց», «զի կատարեցից», «եդին ի մեքենայս», «չարաչար

սատակեցան», «զաշխարհս և զրեղն», «անաբինայ», «եղեալ», «ֆրասու նոցա», «գրելոյս», «գրոցս»:

Ծան. Կիլիկիան շրջանում շատ յաճախ ոյ գրութիւնը արտայայտում է մի այնպիսի երկրաբան, որ աւելի մօտենում է սի (ուի) ծային քան մեր այսօրուայ —ոյ—ին, օր. ֆոյք քառի մէջ. տ. Karst, H. Gr. էջ՝ 23. հետեւապէս եւ պէտք է ընդունել, որ «գտանելոյ» եւ «գրելոյս» բառերի մէջ—ոյ—երկրաբանը հնդկական համար այնքան էլ զգալի զանազանութիւն չի ունեցել ու պարզ ծայնաւորից, որին եւ վերջի վերջոյ յանգել է:

Գրաբարի անաշող կիրառութիւններ են—«յաւրս», «յամիւս յաւիս», «ծախեալ էին», «ի յայս դուխս», «ի յայս մարգարէս», «ի մարդարէս յայս»:

Զեմ խօսում գ և ի նախդիրների մասին, որովհետեւ սրանք երկար ժամանակ գոյութիւն են ունեցել խօսակցական լեզուի մէջ, մանաւանդ արեւմտահայ բարբառներում, և դեռ այսօր էլ բոլորովին չեն անհետացել նոյնիսկ արեւմտեան գրական լեզուից: Արեւելեան բարբառներում գ-ի հետքը մնացել է միայն բանց (=քան զ) բառի մէջ, իսկ ի-ն բոլորովին չբացել է, շնորհիւ մանաւանդ ում մասնիկի, որ այնքան մեծ ծաւալ է ստացել:

Նախկին յոգնակի ներգոյականը, որ նոյն էր հայցականի հետ, տեղի է տուել ուղղականաձև մի ներգոյականի—«ի գիրքտ»:

Ծան. եթէ արդի արեւմտահայ բարբառներում թէ՛ եղակիում եւ թէ՛ յոգնակիում ներգոյականը շատ անգամ ուղղականից չի զանազանում, օր. «այսօր եկեղեցին մեծ քաղութիւն կար», այդ երեւոյթի սկզբնաւորութիւնը պէտք է որոնել Կիլիկեան հայերէնի սոյն շրջանում, ուր մէկ կողմից յոգնակի հայցականն է կորցնում իր զանազանութիւնը յոգնակի ուղղականից, միւս կողմից ի նախդիր վերացումով եւ, զրա հետ միասին, նախդրի տրականի (կամ բուն ներգոյականի) եւ նախդրի հայցականի (օր. «ի յայս մարգարէս») շփոթութեամբ, առաջ է գալիս երեք հոլովների, ուղղ.—հայց.—ներգոյականի, նոյնացում:

Բայց և այնպէս մեր հեղինակի կամ գրչի մօտ այս նախդիրները գործածութիւնն աւելի զբաւարի ազդեցութեան հետեւանք է քան ժամանակակից կենդանի լեզուի արտայայտութիւն. հմ. «Փոանկնոյն ջարբսարէն (բացառական) է», ուր ի նախդիրը բացակայում է: Եւ կամ, ինչ որ նոյնպէս հաւանական է թւում ինձ, յիշեալ նախդիրների վերացումը տեղի է ունեցել աստիճանաբար—նախ բացառականի վրայից ապա և ուրիշ գէպերում:


Հոլովական ձևերից Կիլիկեան շրջանում ամենից աւելի տիրողն է սեռականում—ու վերջաւորութիւնը, որ միաժամանակ երկու տարբեր ձևի է համապատասխանում դասական հայերէնից—

ոյ և—ու վերջաւորութեանց: Ֆռանկուն ձևի հետ միաժամանակ ունինք նաև ֆռանկուն:

Բայական ձևերից ուշադրութեան արժանի է զհետև ձևը:— Ընել վերջաւորութեան կերպարանափոխումը— նույն-ի արապետող չէ ամբողջ խոնարհման մէջ, երբ ունինք նաև զհանկոյ:

Այս շրջանի առանձնայատկութիւններից մին էլ բառազանձի աղբատութիւնն է բնիկ հայերէնի բառերից և ճոխացումը Փրանսական և արաբական տարրերով: Զարիստ հին ֆր. chapistre բառն է. իսկ ջումլ արաբերէն է: Լիով բառի ուղղականն է լո f (նաև լաւf), իսկ նապղել բառն համապատասխանում է դոկ. նապղեմ անուանածանց բային և արմատն է նապղ, որ նայնպէս ծանօթ էր դասական գրողներին. արդի գրական լեզուի մէջ այս բառն ընկած է գործածութիւնից, իսկ բարբառներում ապրում է դեռ բաժանել-ի իմաստով: Արաբական ջումլ բառի մէջ զ-ի փոխարէն կապառէի ն, քանի որ սոյն շրջանում քաղաձայնների ձայնական փոխանակութիւնն արդէն տեղի էր ունեցած: Հաւանօրէն գրչի կողմից մի սխալ է. այլապէս պիտի ենթադրել որ ջումլ շատ հին փոխառութիւն է, տեղի ունեցած մի այնպիսի շրջանում, երբ արաբական զ ձայնը հայերէն զ-ին էր համապատասխանում Կիլիկեան շրջանում: Այս վերջին ենթադրութիւնն ինձ հիմնական չի թւում:

Մ. վարդ. Մախուգեանց



ԳՐԱԽՕՍԱԿԱՆ—ՔՆՆԱԴՍԱԿԱՆ

ՄԱՐԻԱՄ ԽԱՏԻՍԵԱՆ *)

Արիստոկրատիայի դասակարգային նախապաշարունակներն ու դրա հետ կապուած հոգեկան-մտաւոր-բարոյական արատներն այնքան խորն են արմատ բռնած, որ օտար միջավայր ու շրջանն անգամ անկարող են հանդիսանում արմատախիլ անել ընդ միշտ մատաղ արիստոկրատի հոգուց նրա այլանդակութիւնները, կեանքի վրայ ունեցած թեթև ու սին հասկացողութիւնները: Գուցէ հիմք ընդունելով ժողովրդականութեան դերը կեանքի մէջ, թատիսեան մութ գոյներով է նկարագրում նաև բուրժուական ընտանիքների այն անդամներին, որոնց նախնիք ազնուական ծագումն են ունեցել: Ազնուականի հոգեբանութիւնը, մտածելակերպը, կեանքի

*) Տես սոյն Թ. հոկտեմբեր «Արարատ»: